

Գ Ի Շ Ե Ր Ը

Աստղավառ գիշեր, լոյսի դիցանոյշ,
 Օ՛ Նայնաստներ, — կիթառէն անոյշ
 Փախչող եղանակ,
 Արծաթէ ծըփանք վրճիտ և անհոն,
 Պարիկ հոլանի գիրկը ջուրերուն,
 Մըմունք ներդաշնակ:

Հին հովուերգութիւն, ո՛վ սէր, ո՛ նրազ,
 Որ կը ծաւալիս այնքան մեղմունակ
 Մէջը գեփիւտին,
 Բիւրեղի ժրպիտ, պար լուսախաղի,
 Ա՛խ, փարէ՛ հոգւոյս որ ա՛լ չի մարի
 Պատկերն Անցեալին...

Ո՛վ աղբիւր լոյսի, սո՛ն գեղեցկութեան,
 Արծաթէ համրոյր, քրնարի մահան,
 Գիշեր լուսակաթ,
 Հոգւոյս մէջ բացուէ՛, բացուէ՛ լայնօրէն,
 Որ Աստուածներուն քեզ երգեմ նորէն,
 Աստղերու հէքեմթի:
 «Երազ ու վիշտ»
 Անտիպ

Ա Ն Յ Ե Ա Ն Ը

Երբեմն իրիկուան լըռութեան մէջէն
 Անուշիկ ձայներ ինծի կը կանչեն,
 Հին մըտերմութեան խօսքեր ջերմագին,
 Վարդեր սիրարոյր, նորէն կը ծաղկին:
 Ու սիրտըս հիւանդ կարծես կը տանին՝
 Քաղցրիկ մանկութեան մեղմիկ արեւին,
 Եւ ընտանեկան հին պատկերներուն՝
 Ուր կեանքը զըւարթ երազ մ'էր սիրուն:
 Աչքերս, աւա՛ղ, կը տեսնեն լալով
 Հասակներ ծաղիկ՝ զոր մահն ըստուերով
 Նոճիներուն տակ ծածկեր է հիմայ,
 Եւ անոնց համար գիշերը կու լայ:

Հոգիս դողալով կը լըսէ ձեզի
 Մեռելի ձայներ, ձայներ երազի,
 Ձայներ անուշիկ, որ զիս կը կանչեն
 Երբեմն իրիկուան լըռութեան մէջէն...

«Երազ ու վիշտ»

Անտիպ

ԱՐՄԷՆ-ԵՐԿՐԱՅ



ԶԱՐՆՈՒԱԾ ՀԱՅԸ

Վիրաւոր ինկայ... Գիշերն իջաւ սարսուղին,
 Եւ բուրձնակն եղաւ ինծի ողբերգու:
 Աղամանդեայ երազներս ո՛ր թռան գացին,
 Եւ թողուցին զիս հեռու:



Լուսնի լոյսով շուրջըս տեսայ գեղեցիկ
 Իմ սէրերուս անբաժան քաղցր ընկերներս:
 Սակայն ամպիկ մ'արցունքներու վար սահող
 Քողարկեցին իմ աչքերս:



Անուշիկ մէջ, աւա՛ղ, ինծի երեցան՝
 Ուրուականներն որդեակներուս հոգիին:
 Վերջին սիրոյ ողջոյն մը տուին ու անցան
 Մոռացօնքի աշխարհին: